



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 31040
Դեկտեմբեր 7, 1989

Արժանաշնորհ
Տ. Միքայել Ա. Քհնյ. Պաթեքո
Հովի Ա. Յարութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Միքայել,

Այսու գիրով կը յայտնենք որ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորներու եւ անձնափոխանորդներու համար, Թեմական Կանոնադրութեան 14-Գ եւ 54 յօդուածներու համաձայն, եւ 1988 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրաստու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ծուխիդ նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հասցէները Առաջնորդարան ղրկէք ամենէն ոչը մինչեւ Փետրուար 17, 1990 որպէս զի կարելի ըլլայ հրատարակել զանոնք 88-րդ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 3-5, 1990, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Ծաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ Ուստըր Մասսաչուսէցի Ա. Փրկիչ Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ նորընտիր իւրաքանչիւր պատգամաւորի ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդի ատենապետին եւ ատենադպիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներփակենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագիրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոյշ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Վկայագրի նմուշ

Թուական -----

Այսու գիրով կը հաստատենք որ Տիար կամ Տիկին -----
հաւատաւոր անդամ է մեր Եկեղեցոյ եւ ----- -ին
գումարուած Տարեկան Անդամական Ժողովի ընթացքին ընտրուած է թեմական պատգա-
մաւոր:

Ծխական Խորհուրդի
Ատենադպիր

Ծխական Խորհուրդի
Ատենապետ

Հոգևոր Հովիւ

Sample Certificate

Date _____

This is to certify that _____ is a member in good
standing of the _____ Armenian Church; and was duly
elected a Diocesan Delegate by the General Assembly on _____.

Parish Council Secretary

Parish Council Chairman

Parish Priest